

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարություն Շմավոնյանի և Եփրեմ արքեպիսկոպոսի հրապարակվող նամակները մեկ անգամ ևս հավաստում են այն իրողությունը, որ հայ առաջին պարբերաթերթի՝ «Աղղարարի» խմբագիր Հարություն Շմավոնյանը իր ամսագրի հրատարակության դադարեցումից հետո էլ շարունակել է գործուն մասնակցություն ցույց տալ հնդկահայ զաղութի հասարակական կյանքին:

Ինչպես նախկինում, XIX դ. առաջին երկու տասնամյակում ևս նա կապված էր Ռուսաստանի թեմի առաջնորդի և էջմիածնի աթոռի հետ և մեծապես օժանդակում էր Ռուսաստանի նորահիմն հայկական քաղաքների օգտին հանգանակությունների և կտակների գործի կազմակերպմանը:

ՄԱՐԳՈ ՄԵԻԹԱՐՅԱՆ

1

Բարձրահրաման ռվագի նորին Կայսերականի Մեծութեան ամենայն ռուսաց՝ և կոնդակօք ընդհանրական զկաթողիկոսացն ամենայն Հայոց կարգեալ ծայրագոյն նուիրակ և առաջնորդ նաև վերառեսուչ և կառավարիչ ամենայն եկեղեցական և հոգևորական գործոց. և պաշտպան ամենայն քրիստոնէական բարեկարգութեանց բնաւից հայոց բնակեցելոց՝ ի ներքոյ ամենաբարձր հովանաւորութեան Ամենառդուրմած հօրեղ Կայսերութեանն ամենայն ռուսաց Եփրեմ Արքեպիսկոպոս:

Ի պատուելի հասարակութենէ Մատրասու հայոց յիրաքանչիւր ամս ընտրեալ և կացուցեալ կառավարչացդ որբոց նոյնոյ քաղաքի. Հայազն բարեպաշտ պարոնաց երէցփոխան անուանելոց տամ զկատարելագոյն կարողութիւն, ընդհանրապէս ի վերայ ամենայն արդեանց յիրաքանչիւր քաղաքս Հնդկաստանու գտանեցեալ բարեպաշտ հայոց նուիրելոց և կամ կտակելոց յանուն Սուրբ խաչ վանիցն և ուսումնարանաց և տպարանին հայոց՝ և այլոց բարեկարգութեանց Ազովու նոր Նախիջևանու, որպէսզի որ ոք ի Ձէնչ լինիչիք ընտրեալ. ի հասարակութենէ երէցփոխանք և կառավարիչք որբոց. նոյնք ի միասին համանգամայն մեզ ևս լինիչիք վէքիլ և փոխանորդ լիալիր իշխանութեամբ, և ի կողմանէ մերմէ աշխատասիրեալ ի փառս աստուծոյ և ի սէր ազգային բարութեան, զվերահասութիւն ի գործ ածչիք արիապէս ամենայն օրինաւոր կերպիւ և հասու լիչիք՝ թէ յանուն յիշեալ վանիցն, և ուսումնարանաց և տպարանին, կամ աղքատաց և եկեղեցեաց և այլոց բարեկարգութեանց

Ազդովու նոր նախիջկանու և այլոց- յամենայն քաղաքս Հնդկաստանի բնակեալ հայոց յազգէ մերմէ ո՞վ ոք՝ զի՞նչ ունիցի նուիրեալ և կամ կտակեալ տուն, դրամ և կամ այլ ինչ նիւթ, և այնպէս զամենայն արդիւնսն ստացեալ ըստ զօրութեան կտակաց և պայմանագրաց կտակողացն և նուիրողացն զնոյնս. փութ ունիջիք նաև վասն անվտանկ տնօրինելոյ և հաւատարիմ պահպանութեան ենթարկելոյ զմայր դրամսն և զայլ շարժուն և անշարժ կայսն. նոյնպէս և վասն ՚ի Քրիստոս ննջեցեալ պարոն Մասեհ Մարտիրոսի տան եկամտիցն: Զորոյ մեծ մասն կտակեալ է Սուրբ Խաչ վանիցն մերոց, և վասն ՚ի Զին վախճանեալ պարոն Մատթէոս Յոհաննիսի կտակին, և ՚ի Բթաւիայ վախճանեալ պարոն Յարութիւն Զաքարեայի հազար ռուփի կտակին դուք գումով ընդհանրական վէճիլ և փոխանորդ ՚ի դիմաց մերոց, ունելոց էք կարողութիւն վասն յիշեալ երեք գումարին ևս և վասն ամենայն եղելոցն ՚ի զանազան քաղաքս ՚ի զանազան անժանց նուիրելոց ընդհանրապէս առնել օրինաւոր հետևողութիւն, և ըստ զօրութեան իւրաքանչիւրոցն կտակաց՝ զստանալիսն ստանալ, և վասն մնացորդացն տնօրինել անկորուստ պահպանութիւն և վասն բոլորիցն՝ մի առ մի տալ մեզ զժանօթութիւն կատարեալ պարագայիւր Զերով ստորագրութեամբ:

Սև զի հաստատուն եղիցի իմ զձեզ կացուցումն ինձ վէճիլ և փոխանորդ, զայս վէճիլագրութիւն կնքեցի կնքով իմով և ստորագրեցի սեպական ձեռամբ իմով, և վասն առաւել հաստատութեան Գրիգորիպօլու հայոց քաղաքիս հոգևոր կառավարութեան և մաղեստրաթին ևս հտու կնքել և ստորագրել, և գրել ՚ի մատենանս դատաստանաց երկաքանչիւրոց, զի այնպէս և դուք յայտնեալ զնոյնս ՚ի սլատկանեալ դատարանս իւրաքանչիւր քաղաքաց և իշխանութեանց որպէս փոխանորդ մեր խօսեսցիք զխօսելիսն և արասցիք զառնելիսն զինչ և արժան իցէ յաղագս ստանալոյ և յաղագս հաստատուն պահպանութեան ենթարկելոյ յանուն յիշեալ աստուածահաճոյ նպատակաց նուիրեալ զդրամսն և զանշարժ կայսն ՚ի յիշատակ յաւիտենական նուիրողացն զնոյնս: Վասն հեռաւորութեան տեղւոյն և կասկածանաց ՚ի վտանկէ՝ երեք դրեցաւ և կնքեցաւ սովին օրինակաւ ՚ի վերայ այսպիսի թղթոյ:

Եփրեմ արքեպիսկոպոս

՚ի 1807, մարտի 20,
՚ի Գրիգորիպօլ Ձ 135:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 18, վավերագիր 26:

2

՚ի Հնդկա Մատրաս

Արժանապատիւ Տէր Յարութիւն հսկմաւարադարդ
Աւագ քանակայ Շմաւոնեան.

Իմ վաղեմնածանօթ հարազատ սիրելի—

Իրաւացի է առածն իմաստնոյն՝ թէ համբաւք բարի պարաբեն զոսկերս. քանզի այն ինչ տխրամած լեալ դիտեաք յաւէտ, թէ արդեօ՞ք լինիցի օր, և

լինիցի ժամ, յորում գայցէ 'ի կողմանցդ համբաւ րարի, որով պարարեսցեն ոսկերք մեր կարօտութեամբ, ցնծութեամբ և ուրախութեամբ. յանկարծ զօրէն յուսաւայծառ արեգակն 'ի սառնամանեաց վայրս ձմերան ծագելոյ, ծագեցաւ 'ի մեզ լոյս ուրախութեան և համբաւ բարութեան, այն է զուարճացուցիչ գրութիւնը Մատրասու պատուելի որբոց կառավարչաց և երէցփոխանաց. և համօրէն հասարակութեան 'ի տպարանի քում տպեցելոյ՝, և այլոց տեղեաց որք են 'ի կողմունսդ, որովք արդարեւ ո՛չ սակաւ բերկրեցան սիրտք մեր ցնծութեամբ, լցան աչք մեր տեսութեամբ, զմայլեցան քիմք մեր ընթերցմամբ, և միանգամայն 'ի սաստկութենէ ուրախութեան 'ի մօռացօնս եղեն համօրէն կարօտութիւնք մեր, զորս 'ի բազում ամս կրեաք ակնապիշ ելով հանապազ:

Ուրախացաք յոյժ նաև ընդ բազմատեւութիւն բարեկարգութեան հասարակութեան, որք կային և 'ի ժամանակս մեր և ընդ հաստատութիւն բարեկազմ տպարանիդ, զորս և Տէր հանապազ հաստատուն պահեսցէ, 'ի ցնծութիւն հոգւոց և մարմնոց մերոց:

Այլ յոյժ զգալի եղև մեզ, իբրև 'ի հարազատ սիրելւոյդ զթուղթ որպիսածանոց ո՛չ ստացաք. թէ և բարեկարգ հասարակութեան գրութեամբք գիտելով զառողջութենէ ձեր, և նոցին համայնից ծանօթագոյն սիրելեաց և բարեկամաց մերոց յատկաց և հասարակաց, ուրախ եղաք յոյժ բայց արժանաւոր իսկ էր և ձեզ ընդ նոսին հաղորդակցեալ գրել մեզ զանմոռացութիւն սիրոյդ, որով կանխաւ կարեկցեալ էաք ընդ իրեարս, որ պատճառ իցէր 'ի մեզ զբազմապատկական ուրախութիւն, թեև ձեռագրովդ ընդ նոսին մխիթարեաք:

Որպէս և յարգելի եղբայրն մեր զգօնիմաստ նուիրակ Յակոբ սրբազան արքեպիսկոպոսն երբեմնապէս գրելով զորպիսութենէ և զառողջութենէ կողմանցդ սիրելեաց մերոց, և զկարեւոր մտերմութենէ և զջատագովութենէ ձերմէ, ո՛չ սա զմայլեցուցիչ ծաղիկս անթիւ ուրախութեան բուսուցանէր 'ի սիրտս մեր:

Այլ մեր այժմ 'ի քեն զայս ևեթ հարկաւորի խնդրել զի զպատուելի կառավարիչսն և երէցփոխանսն որբոց, զորս փոխանակ մեր յայդոսիկ կողմունս եղեալ արդեանց 'ի վերայ որք պատկանիցեն մերում վիճակի և Առաջնորդութեան, ընդհանրական վէքիլ կարգեցաք, զորս և նաև գրեցաք հասարակութեան, գիտելոց ես լիովին, վասն որոյ և զաւելորդ վարկաք վերստին դրել քեզ, միայն դու ևս պարտիս 'ի սէր մեր և 'ի պայծառութիւն համազգի սերնդոց քոց, անձանձիր հոգացող լինիլ ըստ խոհեմութեանդ այնց իրաց, որք պատկանիցին քումդ աստիճանի, և խոհեմութեան 'ի յօգուտ հասարակաց լատութեան և յաւիտենական յիշատակութեան արժանաւոր: Եւ յաւել քան զայս յոյժ սիրոյ կարօտի ողջոյն և օրհնութիւն մատուցեալ ընդ համաշունչ քոյայնոցն:

Մնամ վասն ձեր միշտ բարեացակամ աղօթարար խոնարհ
Եփրեմ արքեպիսկոպոս Հայոցն Ռուսաստանեայց:

25 մարտի, յամի Տեառն 1807,
'ի Գրեգորիպօլ քաղաքս Հայոց
(երկրորդ օրինակ):

[3. Գ.] Այլև զայս ծանի՛ր իմ հարազատ, զի ըստ բաղձանացս ո՛չ կաբելով մեծագոյն սիրոյ և պատուոյ արժանի նախածանօթ սիրելեաց իմոց, որք

են յայդր՝ յատուկ յատուկ զգիր սիրոյ և օրհնութեան գրել. նմին իրի, հանդէպ սորին յաղագս յատուկ սիրոյ սեպհական ձեռամբ իմով գրեմ զանուանսն նոցա, որք են 'ի սիրագումար ժողովի 'ի Տետրակի տպեցելոյ. զոր և սէրդ իմ ցուցեալ նոցա մատուցես 'ի դիմաց մերոց զկարօտսւի սիրոյ ողջոյն և օրհնութիւն, նաև ալ մնացելոցն մեծաց և փոքունց ընդ համաշունչ ընտանեացն, որով իբր նշանակ լիցի 'ի մէնջ յատուկ յատուկ գրեցելոց առ իւրաքանչիւրսն ըստ պատուելութեանցն:

Այսոքիկ են անուանք նախայիշեալ սիրելեացն իմոց զորս ողջունեցաք՝.

Պատուելի պարոնայք.

Տէր Թադէոս Տէր Անդրէասեան.
Սարկաւագ Թադէոս Սարգսեան.
Սարկաւագ Յակոբ Աղազարեան.
Յօհաննէս Շամիրեան.
Նազար Յակոբջան Շամիրեան.
Մարգար Յօհաննէս Բաբամեան.
Սահակ Աբրահամեան.
Յակոբ Սիմէօնեան իմ աշակերտ.
լավ մեղեդի ասօղ.
Մանուկ Յակոբջանեան Բթաւիոյ.
Վարդան Գատպարեան ևս Բթաւիոյ.
Յակոբ Յարութիւնեան.
Դաւիթ Շէրիմանեան.
Աւէտ Յակոբջանեան.
Առաքել Դիոնէտիոսեան.
Աւէտ Սարգսեան.
Մանուկ Աստուածատուրեան.
Աստուածատուր Յարութիւնեան.
Աէթ Սամեան.
Աւէտ Սէթեան.
Կիրակոս Յարութիւնեան.
Գաբրիել Յարութիւնեան.

Ստեփաննոս Յօհաննիսեան.
Շամիր Զօրէրեան.
Գրիգոր Սամեան.
Մէլքում Մանուկեան.
Յակոբ Յօհաննիսեան.
Յարութիւն Յովսեփ Մարութեան.
Յովհան Մկրտիչեան.
Յովհաննջան Յովհաննիսեան.
Թորոս Կարապետեան.
Ստեփաննոս Մարգար Բաբամեան.
Նիկողայոս Յովհաննիսեան.
Գրիգոր Սէթեան.
Սիմէօն Մկրտումեան Մմիլկեանց.
Ստեփաննոս Ղազարեան.
Հայրապետ Մկրտումեան Մմիլ-
կեանց.
Աբրահամ Յարութիւնեան.
Խաչիկ Մատուրեան Զարաֆեան.
Աւէտ Տէր Թադէոս Տէր Անդրէասեան.
Որք են ընդ քեզ քառասուն, որ է
թիւ յոյժ խորհրդաւոր:

Որոց բոլորից և ալոցն կենաց և բարեյաջողութեանցն հանապազ ջերմե-
ռանդ աղօթարար, ամենախոնարհ եփրեմ արքեպիսկոպոս Հայոցն Ռուսաս-
տանեայց:

Զայս գիր բաց եղաք 'ի գիրս գերապատուելի երէցփոխանաց և կառա-
վարչացն որբոց:

Կաթողիկոսական գիվան,
Քղթապանակ 18, վաճեհրագիր 32:

3

Սրբակրօն Տէր Յարութիւն Շմավոնեան, Արժանապատիւ Աւագ Քահանայ-
Իմ վաղեմի յատուկ հաւատարիմ սիրելի—

Ներկայիս ամենայն որպիսութիւն ևս յայդր 'ի գերապատուելի քանի ան-
ձանց և կամ հասարակօրէն դրութեանց գիտելոց ես, և որպէս նոցա նոյնպէս
և սիրոյդ գրեմ զի է սուրբ Աթոռէն բարձր արժանապատիւ Ներսէս վարդապետ
շնորհալին, զոր ինչ գրեսցէ քեզ, որպէս մեր բան համարեսցի, վասն իսկ և
զայս գիր առ նա բաց յղեցաք յղել ձեզ և այլն:

Մնամ քեզ և յիշեալ գերապատուելեացն
միշտ բարեացակամ ջերմեռանդ աղօ-
թարար Ամենախոնարհ Եփրեմ արքե-
պիսկոպոս Հայոցն Ռուսաստանու:

18 յարտի, 1808,
ի Ղարասու քաղաք Ղոխմու:

Կաթողիկոսական դիվան,
թղթապանակ 18, վաճառագիր 32:

4

Ի սուրբ և աստուածաբան գահն սրբազնութեամբ Եփրեմ Հայրապետին
և երիցս երանեալ աստուածագութ հայր կաթողիկոս Ամենայն Հայոց³—

Սրբացուցիչ նամակ օրհնութեան բարձրութեանդ արժանի արար ընթեռ-
նուլ լի խնդութեամբ և պանծ հոգւով և մարմնով յաղագս առողջ գոյոյ Սրբազ-
նասուրբ և պատուական զխոյզ մերոյ, որոյ Տէր Աստուած արասցէ արժանի
միշտ ամենայն բանից ըստ իմ նուաստ կարծեացն արժան համարեսցի գրել,
եթէ պատուական զուրկ մեր հաճեսցի, այսինքն Սարգիս Մատուրն⁴ կտակաւ
թողեալ է մերձ ութսուն հազար հոնս այսու մտօք, որ, յետ քանի ժառան-
գաւորաց պակասելոց, բոլոր դրամն հասանի Ազովու դպրատանն և տպարա-
նին. և ժառանգքն, որ կան, այսոքիկ են, որպէս գրեմս և ոչ այլ մին:

Մինն է իւր կերակուր եփողն 80 ամեայ.

Մինն է երծաթագին Եթովպացի.

Մինն է իւր դուստր Կատարինէն.

Մինն է իւր եղբօր դուստր Մամաջան Բուրքեշն, և 'ի սոցանէ սերեալքն
զուրկ են 'ի ժառանգութենէ:

Յետ սոցա ժառանգ է մնալոց Ազովն, և գրելոյս դիտումն այս է, եթէ բա-
րի և արժան համարես, կարող ես հոգալ ողորմութեամբ Աստուծոյ, այսօր
բոլոր Ռուսաստանաց եղեալ Հայկազնէից տէր և իշխող և հրամայող Սրբազ-
նասուրբ քահանայապետ ես, և ո՛չ այլ ոք, եթէ ցանկաս շատ դիրին կարող
ես հոգ տանել, այս դրամն մնալու է անկորուստ: Այսպէս ներկայ բարւոք
ձեռի է այդ, այսինքն մնալով նա 'ի ձեռն կտակակատարի, այսինքն Կիրակոս
Յարութիւնեանի և 'ի կողմանէ Ջեր երկու կամ երեք հոգի կարգէք, որ միշտ
մինչ դեռ ժառանգքն կենդանի են, դրամն մնայ թրէժերումն (գանձատնումն),
տարէց տարի հաշիւն տեսանեն, եկամտէն վեր ժառանգաց ծախսն հանելով,
մնացեալն ղնելով 'ի վերայ մայր դրամին, և տարեկան հաշիւն փակեալ

ուղարկեն Սրբազնութեանդ, այսպէս մինչև զրաւումն ժառանգաց ըստ գրութեան կտակին, յայնժամ բոլոր դրամն գուցէ մեծ օգնութիւն հասանի ամենայն ազգաօգուտ բանից և գործոց:

Մնամ միշտ հաւատարիմ պատուական
գլխովդ Շողեն:

Խոնարհ ժառաղիցդ ծառայ

Տէր Յարութիւն Շմաւոնեան:

1819 թիւն հոկտեմբերի 9,
ի Մաղրաս:

«Հյուսիսափայլ», 1859. № 5, էջ 403—404:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Ազգարարի» հրատարակութեան դադարումից հետո Հ. Շմաւոնյանի տպարանը զործում էր և դարակցրին, ուր նա շարունակում էր տպագրել ոչ միայն զանազան գրքեր ու ձեռնարկներ, այլև Մաղրասի հայ հասարակութեան պաշտոնական գրութիւնները, նամակները և տեղի հայ գործիչների հրավիրած ժողովների արձանագրութիւնները:

2 Եփրեմ արքեպիսկոպոսի նամակում հիշված անունները խիստ կարևոր են մեր բանասիրութեան համար: Այդ ցուցակի առաջին անունը՝ XVIII դ. վերջի Մաղրասի ամենապայծառ գործիչներից մեկը Տեր-Թադեոս Տեր-Անդրեասյան Սոգինյանցը, «Ազգարարի» գլխավոր աշխատակիցն էր և «Ողբ Հայաստանեաց» պոեմի հեղինակը: Նա 1791 թ. մի թարգմանական հոդված և առանձին ներբող էր նվիրել Պետրոս Առաջինին («Գովեստ կայսերն Պետրոսի») հայերի ուշադրութիւնը հրավիրելով ռուսաց կայսեր արժանիքների և մեծագործութիւնների վրա (տե՛ս «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեաց», Մաղրաս, 1791, նակ՝ Մ. Մ խ ի թ ա ռ յ ա ն, Հարութիւն Շմաւոնյանը և նրա գործակիցները, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4):

Խաչիկ Ծատուրյան—Ջարիֆյանը Հ. Շմաւոնյանի տպարանի հիմնական բարձրարժեք տպագրիչներից էր: Սիմեոն Մկրտումյան-Սմիլկյանցը (Մկրտում Սիմեոն)—տպարանի վերակացուն էր և զանազան գրքերի հրատարակիչը: Ավետ Սեթյանը, Մանուկ Հակոբջանյանը և ուրիշներ՝ նյութապես օգնում էին տպարանին:

3 Հարութիւն Շմաւոնյանի նամակը Եփրեմ կաթողիկոսին՝ նրանից մեզ հասած վերջին վավերագիրն է: 1859 թ. Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ում հրատարակում է հիշարժան իր նամակը՝ նվիրված հնդկահայերի կտակած գումարների ձեռքբերման հարցին: Հ. Շմաւոնյանի նամակի պատճենը կտակների հետ մեկտեղ Մ. Նալբանդյանը, հավանաբար, ստացել էր նոր նախիջևանի քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանից: Նրան ուղղված մի նամակում Մ. Նալբանդյանը հայտնում է, որ սպասում է «Հնդկաստանի փողերի մասին թղթերի օրինակին», որպեսզի դրանք հրապարակի «Հյուսիսափայլ»-ի առաջին համարում (տե՛ս Մ. Ն ա լ - ս ա ն դ յ ա ն, Ե լ ժ, հ. 4, Երևան, 1949, էջ 58):

4 Ինչպես հայտնի է, Մաղրասում առաջին հայկական տպարանը հիմնել է Շահամիր Շահամիրյանը 1772 թ., իսկ երկրորդը՝ Հարութիւն Շմաւոնյանը՝ 1789 թ.: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Մաղրասի՝ թվով երրորդ՝ 1809 թ. հիմնադրված հայկական տպարանի հիմնադիր և տնօրեն Սարգիս Ծատուր Աղավալյանին: Հիշյալ տպարանում ի թիվս այլ աշխատանքների տպագրվել են նաև ներսես Շնորհալու (1098—1173 թթ.) «Ողբ Եդեսիայ քաղաքի» (Մաղրաս, 1810 թ.), Ֆրանսուա Մարի Վոլտերի (1694—1778 թթ.) «Ողբերգութիւն ի վերայ մահուան Յուլիոս Կեսարու» (Մաղրաս, 1818 թ.) և այլ աշխատանքներ: